տարեալ 'ի դատարանն՝ եհան արտաքսեաց զԳէորգ 'ի վանաց՝ և եհաս զհաղորդակցութիւն նորա 'ի միաբանութենէ։ Թէպէտ արտաքսեցաւ Գէորգ եւ խոստովան եղեւ թէ՝ յանձնեցի զամենայն ինչս վանաց, սակայն ժխտեալ խոստմանն, պահեալ էր զոմանս յանօթոց առ իւր, և ստամբակեալ յուզէր խռովութիւնս 'ի մէջ միաբանաց. այլ և այլ պատճառանօք և ստութեամբ ոչ կամէր յանձնել զոր պահեալն էր, և այս աղմուկ և խռովութիւն նորա տեւեաց ամս եօթն. որոյ վասն անճարացեալ Յովհաննու, յանձն արար զխնդիրն Մկրտիչ եպիսկոպոսի և Մանսուրայ՝ օրինօք վճարել զգործն. եւ նոքա ամբաստանեալ վերստին վարեցին զնա 'ի դատաստան՝ ուր մտին 'ի դատ քննութեան առաջի այլազգեաց. և 'ի դերեւ հանեալ զամենայն ամբաստանութիւնս Գէորգայ, պարտաւորեցին զնա յատենի, եւ առին 'ի նմանէ զամենայն կահս զոր պահեալն էր. մինչեւ ասել Մկրտչի և Մանսուրայ թէ չունիմք այսուհետեւ պահանջս ինչ 'ի Գէորգայ. և ապա արձակեցին զնա, ՋՀԳ (1524)։

Խաչատուր եպիսկոպոս որդի Ապտուլլահի փոխանորդ Յովհաննու, և Մանսուր որդի Ղաննէմի գործակից նմին, (անուն Արաբացւոց և օտար յազգային անուանց (*)). 'ի կարգի եդին ընդ Արաբացիս զՂափար կոչեցեալ տուրս Բեթղեհէմի. եւ սահմանեցին զայն օրինօք դատարանի առնուլ յիւրաքանչիւր ուխտաւորէ 2 դրամ արծաթ բերիոյ, և աւելի քան զայն չպահանջել ինչ յուխտաւորաց և նեղել զնոսա։

Յաւուրս Յովհաննու Պատրիարքի գմբեթն որ 'ի վերայ Համբարձման ոտնատեղւոյն Քրիստոսի՝ 'ի լերան Ձիթենեաց, խախտեալ և աւերեալ՝ և էր մերձ 'ի կործանիլ, և յերկիւղէ վտանգի չհամարձակէր ոք մտանել 'ի ներքս յերկրպագութիւն տեղւոյն։ Իսկ Խաչատուր եպիսկոպոս և Մանսուր կամեցեալ շինել և նորոգել զայն. սակ արկին ընդ ճարտարապետի քաղաքին և ընդ այլոց ոմանց 5000 դահեկանի և միոյ վերարկուի, և զպայման՝ սակարկութեան հաստատեցին 'ի ձեռն դատաւորին, և նոքա ձեռնարկեալ

(*) Թարգման կամ գործակատար Լատին վանաց։